ԿԱՐԾԻՔ

ԳԱԳԻԿ ՍԵԴՐԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
«ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

ԺԳ.00.02 - Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում հանդիսանում է բարդ և բազմակողմանի գործընթաց, որը պահանջում է դասավանդողների, սովորողների և ուսումնական հաստատությունների համակարգված մոտեցում: Այս գործընթացն ուղղված է սովորողների գեղագիտական ընկալմանը, մշակութային ըմբռնմանը և ստեղծագործական ունակությունների ձևավորմանը, ինչը հանդիսանում է նրանց ընդհանուր զարգացման և անհատականության կայացման կարևոր գործոնը:

Ընդհանուր առմամբ, պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պահանջում է նաև ինտեգրված մոտեցում, ներառյալ արվեստի պատմության ուսումնասիրությունը, ստեղծագործական մտածողության և վերլուծական կարողությունների խթանումը, ինչպես նաև համապատասխան պայմանների ստեղծումը յուրաքանչյուր սովորողի ինքնադրսևորման եւ ինքնիրացման համար:

Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման հիմնական բաղադրիչը հանդիսանում է գեղեցիկի բացահայտումը արվեստի միջոցով: Պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում գծանկարի, գեղանկարչության, կիրառական արվեստի, ինչպես նաև համակարգչային ծրագրերի

գործունեության միջոցով աշխատելը նպաստում է ոչ միայն առարկաների նշանակության ըմբռնմանը և գնահատմանը, այլև սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Այս առումով կարևոր քայլ է Գ. Ավետիսյանի կողմից սույն ատենախոսության կազմումը, որը բաղկացած է ներածությունից, առաջին և երկրորդ գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և երեք հավելվածներից:

Ներածությունում հեղինակը ճիշտ է կարևորել հետազոտության նպատակը. «Մշակել պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգը» [էջ 4]: Նպատակին միտված առաջ են քաշվել հիմնական թվով վեց խնդիրները, որոնցից հատկապես կարևորում ենք 5-րդ կետը. «Մշակել ինովացիոն միջոցների ներգրավմամբ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումն ապահովող մանկավարժական պայմանները» [էջ 5]: Գտնում ենք, որ արդի կրթական միջավայրում ինովացիոն միջոցների ակտիվ ներգրավումը ուսումնական գործընթացներում բազմակողմնակիորեն նպաաստում է կրթական որակի բարելավմանն ու նորարարական մոտեցումների ներդրմանը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման գիտատեսական հիմքերը պատմամշակութային կոթողների ուսումնասիրման համատեքստում» խորագրով, Գ. Ավետիսյանը ներկայացնում է գեղարվեստական ընկալունակության ձևավորման և զարգացման պատմական շրջանը, ինպես նաև ընդգծում, որ սովորողների կողմից գեղարվեստական ընկալունակության ձևավորման սկզբնական փուլը պատմամշակութային հուշարձաններին ծանոթանալն է գրականության ուսումնասիրության, վերատպությունների, թանգարաններ և ցուցահանդեսներ այցելելու, ինչպես նաև էքսկուրսիաների անցկացման՝ հատկապես պլեներային նկարչության միջոցով: Վերջինս հանդիսանում է հեղինակի հետազոտության կարևոր բաղադրիչներից մեկը և առավել համապարփակ ուսումնասիրվում ատենախոսության երկրորդ գլխում:

Փաստենք, որ պլեներային նկարչությունն օգնում է սովորողներին տեսնել հուշարձանները իրենց ժամանակի, բնության և պատմամշակութային նշանակության համատեքստում: Դրան հաջորդում է սովորողների ակտիվ աշխատանքը տեսողական ընկալման և նյութերի հետ: Սովորողները հմտանում են գեղարվեստական տեխնիկայի միջոցով փոխանցել հուշարձանների ճարտարապետական առանձնահատկությունները, դեկորատիվ մանրամասները, տրամադրությունը և սիմվոլիզմը: Ստեղծագործական նախագծերի վրա աշխատելով նրանք զարգացնում են իրենց երևակայությունը, մանրուքների նկատմամբ ուշադրությունը, հույզերն ու մտքերը գեղարվեստական լեզվով արտահայտելու կարողությունը:

Գեղարվեստական ընկալունակության ձևավորման կարևոր կողմերից է ավարտված աշխատանքների քննարկումն ու վերլուծությունը: Սովորողները կիսվում են իրենց տպավորություններով, վերլուծում տեխնիկական կատարումը, քննարկում պատմամշակութային հուշարձանների խորհրդանշական բովանդակությունը, ինչը նպաստում է դրանց գեղարվեստական արժեքի ավելի խորը ըմբռնմանը [115-116 էջ]: Բացի այդ, կարևոր է պայմաններ ստեղծել սովորողների ինքնուրույն ստեղծագործական գործունեության համար: Նրանց գաղափարներին և փորձերին աջակցելն ու խրախուսելը օգնում է նրանց վստահություն զարգացնել սեփական ստեղծագործական ունակությունների նկատմամբ և զարգացնել անհատական գեղարվեստական ոճը:

Պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացը հանդիսանում է սովորողների համար նաև մշակույթային ժառանգության պահպանության և հանրայնացման կարևոր հիմնախնդիր, ինչպես նաև հայրենաճանաչման գործոն: Այդ խնդիրն առավել քան արդիական է ՀՀ-ից դուրս գտնվող հայկական կրոնական և պատմական այլ հուշարձանների պահպանության առումով: Ինչպես հեղինակն է նշում էջ 43-ում «Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս առկա են հայոց հնամենի մի շարք կոթողային շինություններ, որոնց պատշաճ ներկայացումը, սովորողների մեջ դաստիարակչական և զարգացնող առաջնահերթ արժեքներից զատ, կձևավորի նաև հայրենիքի ճանաչողության բարձր մակարդակ և կամրապնդի պահպանության հիմնախնդիրը»:

Վերոնշյալ նպատակներին հաջողությամբ հասնելու համար Գ. Ավետիսյանը ատենախոսության երկրորդ գլխում՝ «Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգի փորձարարական հիմնավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում», ընդհանրացնելով՝ մատնանշում է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման համար մի քանի գործածելի մոտեցումներ.

Ճանաչողական մոտեցում, որը ներառում է հուշարձանների պատմության և մշակութային համատեքստի, դրանց ճարտարապետական առանձնահատկությունների, ոճական առանձնահատկությունների և սիմվոլիզմի ուսումնասիրությունը: Սա օգնում է սովորողներին ավելի լավ հասկանալ հուշարձանների նշանակությունն ու նշանակությունը:

Զգացմունքային մոտեցում, որը խրախուսում է սովորողներին էմոցիոնալ կերպով արձագանքել պատմամշակութային վայրերին՝ մարդկանց, իրադարձությունների և գաղափարների միջոցով, որոնք կապված են այդ վայրերի հետ:

Ստեղծագործական մոտեցում, որը ներառում է սովորողների ակտիվ մասնակցությունը պատմամշակութային հուշարձաններով ոգեշնչված սեփական գեղարվեստական ստեղծագործությունների ստեղծմանը: Դա կարող է լինել գծանկար, գեղանկար, կոմպոզիցիա և այլն:

Ինտերակտիվ մոտեցում, որը ներառում է այցելություններ թանգարաններ, ցուցահանդեսներ, էքսկուրսիաներ պատմամշակութային վայրեր, տպավորությունների քննարկում և կարծիքների փոխանակում համակուրսեցիների և դասախոսների հետ:

Ինովացիոն միջոցների կամ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, ինչպիսիք են ինտերակտիվ կրթական ծրագրերը, վիրտուալ էքսկուրսիաները, աուդիո և վիդեո նյութերը, որոնք օգնում են ավելի պարզ և հետաքրքիր ներկայացնել պատմամշակութային հուշարձանները:

Սովորողների գեղարվեստական ընկալունակության արդյունավետ զարգացումը ներառում է ոչ միայն գիտելիքների փոխանցում, այլ նաև խթանում է նրանց

հետաքրքրությունը, երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը և հուզական արձագանքը պատմամշակութային կոթողների նկատմամբ:

Եզրակացության մեջ Գ. Ավետիսյանն ամփոփում է իր կատարած հետազոտության արդյունքները՝ ներածությունում առաջ քաշած վեց խնդիրներին անհրաժեշտ համապարփակ եզրակացություններ ներկայացնելով:

Գրականության ցանկում ներկայացված են ինչպես հեղինակի կողմից ատենախոսության վերաբերյալ հետազոտական հոդվածների, այնպես էլ այլ մասնագետների կողմից հրատարակած գիտական հոդվածների, աշխատությունների, մենագրությունների, գիտամեթոդական և ուսումնական ձեռնարկների թվով 151 անուն գրականություն՝ հայերեն և օտար լեզուներով:

Հավելվածների միջոցով Գ. Ավետիսյանը ներկայացրել է հարցաթերթիկների երեք նմուշներ, «Հռիփսիմեատիպ» եկեղեցիների վերատպություններ և թվային պատկերագրման աստիճանական ուսուցման մի օրինակ:

Այնուհանդերձ, ատենախոսության մեջ առկա են նաև որոշակի տեխնիկական բացթողումներ և թերություններ, որոնց շտկումը միմիայն կբարելավի աշխատանքի որակը

1. Ատենախոսության ներածության «Հետազոտության կառուցվածքը և ծավալը» բաժնում (էջ 10), Գ. Ավետիսյանը վերջում նշել է. «Ընդհանուր 146 էջ (առանց հավելվածների) ներառյալ՝ 151 անուն գրականություն, 1 տրամագիր, 4 աղյուսակ, 4 գծապատկեր»:
   Սակայն ատենախոսության հավելվածում առկա են կարևոր նշանակության թվով 51 վերատպություններ և նկարներ, որոնց առկայության մասին ևս ցանկալի կլիներ որ մատնանշվեր ներածության մեջ:
2. Հեղինակը էջ 33-ում հպանցիկ անդրադարձել է Վ. Վոլկինի կողմից առանձնացվող պայմանականության սխալ ընկալման «նայիվ ռեալիզմի» հիմնախնդրին, սակայն գտնում ենք, որ ցանկալի կլիներ առավել մանրամասն հստակեցնել այդ եզրույթը:

3. Ատենախոսության երկրորդ գլխի սկզբնամասում (էջ 57-70), հեղինակը ներկայացրել է «Պատմամշակութային կոթողների պատկերագրման առարկայական ծրագրերին առաջարկվող թեմատիկ մոդելի» աղյուսակը, որը թեև կազմված է գրագետ և բովանդակալի, սակայն հետազոտության ամբողջականության տեսանկյունից կարծում ենք, որ առավել նպատակահարմար կլիներ այն զետեղել ատենախոսության հավելվածում:
4. Ատենախոսության մեջ առկա են թվով 4 աղյուսակներ և գծապատկերներ, և ընդամենը 1 տրամագիր: Ու թեև հեղինակն ամբողջացրել է ստացված հետազոտության արդյունքների վերլուծությունը այդքանով, այնուհանդերձ գտնում ենք, որ նման բովանդակության գիտափորձի պարագայում ևս մի քանի վերլուծական տրամագիրների առկայությունը կլրացներ առկա վիճակագրությունը:

Վերոնշյալ դիտողություններն այնուհանդերձ չեն արժեզրկում Գ. Ավետիսյանի ատենախոսության արժեքն ու նշանակությունը, հատկապես առաջադրված նպատակի և խնդիրների ձևակերպման, ինչպես նաև հետազոտության արդյունքների հավաստիության մակարդակը:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ.

1. Գագիկ Սեդրակի Ավետիսյանի «Սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում» թեմայով ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն և ամբողջական աշխատանք, որը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսական աշխատանքներին ներկայացվող աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի և ԺԳ.00.02 - Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին:

2. Գագիկ Սեդրակի Ավետիսյանն իր կազմած ատենախոսության համար արժան է հավակնած գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր ՅՈՒ.Վ.ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

Հաստատում եմ

Յու.Վ.Յուզբաշյանի ստորագրությունը

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի

գիտ. քարտուղար մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ Մ.Մ.ԻՍՊԻՐՅԱՆ